**Տատիկ զալուր կըմաղեր**

Տատիկ զալուր կըմաղեր,
Տատիկ զալուր կըմաղեր,
Տատիկ զալուր կըմաղեր,
Վըր մազերուն կըշաղեր:

Տատիկ զալուր կըմաղեր,
Վըր թշերուն կըշաղեր:

Տատիկ զալուր կըմաղեր,
Վըր ուսերուն կըշաղեր:

Տատիկ զալուր կըմաղեր,
Վըր թևերուն կըշաղեր:

Տատիկ զալուր կըմաղեր,
Վըր ոտքերուն կըշաղե՜ր:

**Խմոր շաղեմ՝ ճըստ, վըստ, ճըստ, վըստ,**
**Խմոր շաղեմ, լոշիկ թխեմ,**
**Խմոր շաղեմ, հաց թխե՜մ:**
(ձգել քառորդի չափ, ապա՝ քառորդ դադար)

Ալյուր մաղեմ, խմոր շաղեմ, գունդ անեմ, գունդ անեմ,
Տապ-տապ անեմ, տապ-տապ անեմ, բաց անեմ, բաց անեմ,
Գունդ քցեմ, թոնրին խփեմ, հաց հանեմ, հաց հանեմ,
Գունդ անեմ, գունդ անեմ, գունդ անե՜մ:

**Ծալ էրա**

Ծալ էրա, հայ, ծալ էրա,
Խորոտ շիլեն ծալ էրա,
Ծալ էրա, հայ, ծալ էրա,
Խնձոր թալիմ, համ էրա:

Ամպեր էրաց, հով էրաց,
Անձրև էրաց, ծով էրաց:

Ծալ էրա, հայ, ծալ էրա,
Խորոտ շիլեն ծալ էրա,
Ծալ էրա, հայ, ծալ էրա,
Խնձոր թալիմ, համ էրա:

Արև էրաց, լուս էրաց,
Բարև էրաց, շող էրաց:

Ծալ էրա, հայ, ծալ էրա,
Խորոտ շիլեն ծալ էրա,
Ծալ էրա, հայ, ծալ էրա,
Խնձոր թալիմ, համ էրա:

**Կռունկ, հոպ տուր ու թռի**

Կռունկ, հոպ տուր ու թռի,
Կռունկ, ծափ տուր ու թռի: -2

Կռունկն ընկավ կալերը,

Կռունկ, հոպ տուր ու թռի,
Կտրավ սազիս թելերը,
Կռունկ, ծափ տուր ու թռի:

Կռունկ, հոպ տուր ու թռի,
Կռունկ, ծափ տուր ու թռի: -2

Կամաց քշեք սելերը,
Կռունկ, հոպ տուր ու թռի,
Կապեմ չուխուս թելերը,
Կռունկ, ծափ տուր ու թռի:

Կռունկ, հոպ տուր ու թռի,
Կռունկ, ծափ տուր ու թռի: -2

Ա՜յ տղա, պարի մեջը,
Կռունկ, հոպ տուր ու թռի,
Ես եմ քո խաղի մեջը,
Կռունկ, ծափ տուր ու թռի:

Կռունկ, հոպ տուր ու թռի,
Կռունկ, ծափ տուր ու թռի: -2

Սարեն ես գամ, ձորեն՝ դու,
Կռունկ, հոպ տուր ու թռի,
Պագըմ ես տամ, էրկուս՝ դու,
Կռունկ, ծափ տուր ու թռի:

Կռունկ, հոպ տուր ու թռի,

Կռունկ, ծափ տուր ու թռի: -2

*Բաղը քաղինք*

- Տղա, շիրով կողովտ ի պեր՝
Քցեմ ինե հասած ճթեր:
- Դե, հարսի ջան, դե ախչի ջան,
Քաղենք, թալենք, շալկեմ, տանեմ:

*Բաղը քաղինք*

Բաղը քաղինք, խաղողը տարանք,
Չարազը, չարազը,
Ճառթեք, տըղներ, մաճառ խըմենք,
Ավազը, ավազը:

Խաղողը ճառթենք, կարմիր շիրան
Չըռչըռա, չըռչըռա,
Լըցնենք կարասն, էփի, թափի,
Վըռվըռա, վըռվըռա:

Դե՛, ճառթի, հա՛, դե՛. ճառթի, հա՛,
Կըրընկի, կըրընկի,
Չըփչըփացրու, փըռռա - խաղա
Տըրընգի, տըրընգի:

Խաղողը ճառթի, շիրան հանենք,
Ճըփճըփա, ճըփճըփա,
Մաճառ խմենք ու խաղ կանչենք,

Զըրընգա, զըրընգա:

## *Վեր, հա վեր -վեր*

Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Վերն օր ասես՝ էնիկ է,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Վերն օր հավնիս՝ էնիկ է:

Աչքեր ունես՝ նըռան հատ,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Կապտածաղիկ կըտավհատ,
Վերն, օր ասես էնիկ է,
Էրնեկ թե մերըդ բերեր,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Քեզ պես աղջիկ քանիմ հատ,
Վերն օր հավնիս՝ էնիկ է:

Ծաղիկ ես փընջի միջին,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Անուշ կաթ՝ սընձի միջին,
Վերն, օր ասես էնիկ է,
Մեղրահամ անուշ կորիզ,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Դեղին թուրինջի միջին,
Վերն օր հավնիս՝ էնիկ է:

Արի էրթանք կալերը,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Կանչենք անուշ խաղերը,

Վերն, օր ասես էնիկ է,
Արիք խաղանք հարի  լուս,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Էգվան կէնեն մեզի դուս,
Վերն օր հավնիս՝ էնիկ է: